ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1965 Общественные науки

Մ. Լ. Հովհաննիսյան

# ԼԵՀԱՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 16—17-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Բազմազգ Ռեչ Պոսպոլիտայի քաղաքային բնակչության իրավական վիճակը պայմանավորված էր ոչ միայն դասային պատկանելությամբ, այլև ազգությամբ ու դավանանքով։ Այս հանգամանքը իրեն զդացնել էր տալիս հատկապես արևմտաուկրաինական հողերում, որտեղ ապրում էին բազմաթիվ ազգությունների ներկայացուցիչներ (ուկրաինացիներ, լեհեր, գերմանացիներ, հայեր, հրեաներ և այլն)։

Դեռ լեհական տիրապետության հաստատման սկզբնական շրջանում (XIV դարի կեսերին) ձեռնարկելով Լվովի և մյուս քաղաքների ներքին ինքնավարության կազմակերպման գործը, Կազիմիր 3-րդ թագավորը ստիպված էր բախվել մի այնպիսի բարդ պրոբլեմի հետ, ինչպիսին էր քաղաքային բազմազգ բնակչության իրավական վիճակի որոշումը։ Բուն լեհական հողերում նման պրոբլեմ համարյա գոյություն չուներ, քանի որ քաղաքային բնակչությունն այնտեղ բաղկացած էր նույնադավան (կաթոլիկ) գերմանացիներից և լեհերից։ Լեհական քաղաքներում կիրառվում էին արքունիքի կողմից պաշտոնապես ճանաչված գերմանական կամ մագդեբուրգյան օրենքները, որոնց մեջ մանրամասն նշված էին քաղաքացիների և քաղաքային հիմնարկությունների իրավունքները։

Գալիցյան Ռուսիայի, Վոլինի և Պոդոլիեի քաղաքների բնակչության իրավունքների հարցի լուծումը լեհական ֆեոդալները կապում էին հատուկ քաղաքական նկատառումների հետ։ Ըստ նրանց, հարցի լուծման հիմնական նպակետը պետք է լիներ նոր զրաված հողերում իրենց տիրապետության ամրապնդումը և հարատևումը։ Եվ իսկապես, երբ Կազիմիր 3-րդը 1356 թ. հունիսի 17-ին Լվովին շնորհեց մագդեբուրգյան իրավունք, նա առաջին հերթին ապահովեց պետության հիմնական հպատակների՝ գերմանացիների և լեհերի տիրապետող դիրքը քաղաքում։ Լեհական ֆեոդալներին ամենից շատ զբաղեցնող այդ խնդիրը լուծելուց հետո նա թույլ տվեց, որպեսզի ոչ-կաթոլիկ ազգությունները, այդ թվում նաև հայերը, օգտվեն իրենց ազգային օրենքներից, բայց միայն այն պայմանով, որ նրանց ազգային հիմնարկությունները ենթարկվեն քաղաքի լեհական վոյտին։

Առևտրի և արհեստների հետ սերտորեն կապված հայերի համար, բնական է, մեծ նշանակություն ուներ քաղաքում և առանձնապես քաղաքային շուկայի մերձակայքում բնակվելը։ XVI դ. վերջում և XVII դ. հայերի բնակեցումը քաղաքներում կատարվում էր քաղաքատեր-ֆեոդալների հատուկ արտոնագրերով։ Այսպես 1686—1687 թթ. մի խումբ հայ գաղթականներ ոմն Դանիել Ծառուկովիչի գլխավորությամբ բնակություն հաստատեցին Ջոլչև քաղաքում, որը հանդիսանում էր Սոբեսկիների ֆեոդալական տիրույթը։ 1688 թ. հոկտեմբերի 29-ին հատուկ արտոնագրով Յան Սոբեսկի թագավորը նրանց շնորհեց մի շարք արտոնություններ՝ իր և իր հետնորդների անունից

հանդիսավոր խոստում տալով «հավիտենս չխախտել և պահել մեր թագավորական խոսքը»[1]։ Այդ արտոնագրի համաձայն տեղի հայերը 20 տարի ժամկետով ազատվում էին մի շարք հարկերից և տուրքերից։ Սահմանված ժամկետն անցնելուց հետո նրանք պարտավոր էին տարեկան մեկ ղլոտի վճարել շուկայում զբաղեցրած տեղի համար և կես ղլոտի՝ շուկայի մերձակայքում գտնվող փողոցներում տեղ զբաղեցնելու համար[2]։ Բոլոր հայերը ազատված էին բնամթերքով վճարվող մի շարք հարկերից՝ բացառությամբ մեղու պահելու համար սահմանված տասանորդի[3]։

Նման մի այլ արտոնագրում, որը Ռաշկով քաղաքի հայերին շնորհել էր իշխան Յուզեֆ Լյուբոմիրսկին, 1571 թ. մարտի 19-ին, ասվում էր. «Որովհետև ամում քաղաքացն պայծառաշինութի լինի, աւելցրնելով զբնակիչս նորին, և զժողովս, ես ալ փափաքելով զշինութի և զպայծառութի իմ ժառանգաւոր քաղաքիս Ռաշիքովայ, աւելնալով ամէն ցեղ ժողովրդովն, և մանաւանդ ազգաւն Հայոց Պազիրկանաց, վս այնորիկ այս հայազգ ժողովրդեան կուտամ զիմ Բրավան, որնոր իմ Բրավայովն սիրտ և միտքն իւրնց հաստատվի գալ՝ի Ռաշքովն, տան շինութի և Պազիրկանութի անեն, տինճ և համարձակ բնակվելով»[4]։

Այս օրինակները վերաբերում են հայ գաղթականների խմբային բնակեցմանը։ Դրանից զատ հայերը լեհական քաղաքներում բնակություն էին հաստատում անհատապես կամ առանձին ընտանիքներով։ Նման դեպքերում նրանք, իհարկե, առանձին արտոնագրեր չէին ստանում։ Նրանց մեծ մասը հաստատվում էր քաղաքամերձ հողերում (przedmiescie), որովհետև բուն քաղաքում բնակվելու համար սահմանված էին բավական խիստ մի շարք կանոններ։ Ամենից առաջ անհրաժեշտ էր լինել կաթոլիկ. պետք է քաղաքային վարչություն ներկայացվեր հարազատ քաղաքի կնիքով հաստատված և մի որևէ նշանավոր անձնավորության կողմից ստորագրված վկայական, որը հաստատեր տվյալ մարդու օրինական ծնունդը, ինչպես նաև այս նոր քաղաքի երկու որևէ քաղաքացիների երաշխավորագրեր։ Բացի այս պայմաններից, քաղաքում բնակվել ցանկացողները այդ քաղաքում պետք է ունենային ոչ պակաս, քան 300 լեհական ղլոտի արժողությամբ սեփականություն, քաղաքային դրամարկղ (սնդուկ) մուծեին որոշակի գումար կամ զինապահեստ հանձնեին որևէ զենք։ Հաճախ պահանջվում էր նաև մեկ տարվա ընթացքում քաղաք բերել ընտանիքը, կամ չամուսնացած լինելու դեպքում՝ ընտանիք կազմել։

Այս բոլոր պայմանների առկայության դեպքում միայն քաղաքային վարչությունները նոր քաղաքացու սղգանուն գրանցում էին հատուկ մատյաններում, ապա նրանից ընդունում երդում՝ քաղաքին և թագավորին հավատարիմ լինելու մասին[5]։

---

[1] D-r ł. Charewiczowa, Dzieje miasta Złoczowa, էջ 180։

[2] Խոսքը վերաբերում է թե բնակվելու և թե առևտրի համար տեղ զբաղեցնելուն։

[3] D-r. ł. Charewiczowa, Նշվ. աշխ., էջ 58։

[4] Մինաս Բժշկեանց, Ճանապարհորդութիւն 'ի Լեհաստան..., էջ 165—168։

[5] A. Czołowski, Poglad na organizację i działalnosc dawnych władz miasta Lwowa do 1848 r. Lwow, 1896, էջ 29—30։

Այդ խիստ պայմանները լուրջ խոչընդոտ էին հանդիսանում նրանց համար, ովքեր ցանկանում էին բնակություն հաստատել քաղաքում։ Ի դեպ, դրանց մեջ պարունակող գույքային ցենզի պատճառով քաղաքի բնակիչ չէին կարողանում դառնալ նաև շատ կաթոլիկներ։ Բայց և այնպես այս հարցում անհամեմատ դժվար էր հայերի, ուկրաինացիների, ռուսների և ոչ-կաթոլիկ մյուս ազգությունների վիճակը, որովհետև բացի վերը նշված կանոններից, վերջիններիս համար ստեղծված էին հատուկ սահմանափակումներ։ Օրինակ, լեհ թագավորների կողմից սահմանված կարգի համաձայն, մինչև 1652 թ. Լվովում հայերը կարող էին ունենալ միայն 73 տուն, իսկ հետագայում այդ թիվը ավելացավ ևս 10 տնով։ Ուկրաինացիները XVI դարում այնտեղ ունեին միայն 30 տուն[7]։

1540 թ. Լվովի քաղաքային վարչությունը հրապարակեց հետևյալ որոշումը. «Հայտնում ենք բոլորին համատեղ և յուրաքանչյուրին առանձին, ում որ այդ վերաբերում է, որ հին սովորության և պրակտիկայի համաձայն Լվով քաղաքում ռուսինները (իմա՝ ուկրաինացիները) և մյուս բոլոր դավանանքի մարդիկ, բացառությամբ հռոմեական հավատի քաղաքացիների, հիշյալ Լվով քաղաքի շուկայում տներ չունեն, որովհետև քաղաքի հին իրավունքների և ազատությունների համաձայն նրանց չի թույլատրվում (տներ) գնել և բնակվել, և դա մենք արգելում ու չենք թույլատրում (այժմ ևս), ինչպես այդ արվում էր հնուց ի վեր, իսկ ռուսինները և այլ դավանանքի քաղաքացիները պետք է բավարարվեն այն փողոցներով և վայրերով, ուր նրանց հնուց ի վեր տեղավորել են»[8]։ Իսկ նրանց տեղավորել էին Հայկական և Ռուսական փողոցներում. որոնց չափազանց սահմանափակ տարածությունը թույլ չէր տալիս նոր տներ կառուցել։ Ի դեպ, Լվովի այդ երկու փողոցներն էլ պահպանվել են նույն ձևով, ինչպես որ կային XVII դարում։ Երբ մենք դրանց համեմատում ենք նույնպիսի հին փողոցների հետ, համոզվում ենք, որ քաղաքային իշխանությունները պարզապես չէին ցանկանում ավելացնել քաղաքի ոչ կաթոլիկ բնակչությունը։ Քաղաքում բնակություն հաստատելու դժվարությունները լրացվում էին հայերի իրավական վիճակի նաև այլ կարգի սահմանափակումներով։ Դրանցից նշենք թեկուզ միայն այն, որ ընդհուպ մինչև XVII դ. երկրորդ կեսը հայերը լիովին զրկված էին քաղաքների կառավարման գործին մասնակցելու և, առհասարակ, քաղաքում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից։

Այս տեսակետից բացառություն էր կազմում միայն քաղաքի գլխավոր թարգմանչի (interpres, proxonata) պաշտոնը, որը դատելով պահպանված փաստաթղթերից, եղել է չափազանց պատասխանատու մի պաշտոն։ Այն ավանդաբար զբաղեցրել են լեհահայերը։

Միայն XVII դ. կեսերից դրությունը սկսեց փոխվել։ Ռեչ Պոսպոլիտայի քաղաքների տնտեսական փլուզումը, որը տեղի հայերի համար առավել ևս ծանր էր նրանով, որ այն համընկավ կաթոլիկ եկեղեցու կողմից նրանց նկատմամբ կիրառվող հալածանքների հետ, շլյախտային և մագնատներին ստիպել տվեց որոշ չափով մեղմացնել հայերի նկատմամբ հանդես բերվող վերաբերմունքը և շահագրգռել նրանց մնալու Լեհաստանում։ Ժամանակի պահ-

[6] D. Zubrzycki, Kronika miasta Lwowa, Lwów, 1844, էջ 344։

[7] І. Крипякевич, Львівська Русь, էջ 17։

[8] Նույն տեղում, էջ 18։

պանված նյութերը ցույց են տալիս, որ սկսած այդ շրջանից լեհահայերը աստիճանաբար մասնակցում են ինչպես քաղաքային ու պետական կառավարման գործին, այնպես էլ երկրի հասարակական-քաղաքական կյանքի մյուս բնագավառներին։ Այսպես, արդեն XVII դ. կեսերին մենք տեսնում ենք, որ հայազգի Ալմաստ (Ալմազ) Թորոսովիչը զբաղեցնում է տրեմբովելյան ամրոցի բուրգգրաֆի պաշտոնը[9]։ Այդ ժամանակ նրանց կարելի է տեսնել նաև Լվովի մագիստրատի հատուկ հանձնաժողովի կազմում, որը քաղաքի տնտեսական կյանքում խոշոր դեր էր կատարում[10]։ 1678 թ. Լվովի հայ քաղաքացի Ավետիքովիչը ընտրվում է քաղաքային խորհրդի անդամ, իսկ Կասպր Բուտահովիչը այդ ժամանակ դառնում է լեհական դատարանի երդվյալ դատավոր (lawnik)[11].

Այս կարգի փաստերը չափազանց շատ են։ Սակայն միջնադարյան Ռեչ Պոսպոլիտայի հայ դաղթականների իրավական վիճակը քննարկելիս չի կարելի սահմանափակվել նրանց միայն քաղաքային իրավունքներով։ Չպետք է մոռանալ, որ լեհահայերը պետության մյուս բոլոր հպատակների հետ միասին ունեին մի շարք իրավունքներ և պարտականություններ։ Այդ մասին են խոսում Լեհաստանի պետական, քաղաքական, դիվանագիտական և կյանքի մյուս ասպարեզներում հայերի ակտիվ մասնակցության վերաբերյալ փաստերը, որոնք, բարեբախտաբար, զգալի քանակությամբ պահպանվել են մինչև մեր օրերը։ Այդ նյութերից երևում է, որ բնակվելով լեհական պետության սահմանամերձ շրջաններում, հայերը մասնակից են դարձել պետության կյանքում կատարված քաղաքական ու ռազմական իրադարձություններին։ Կարելի է համարձակ կերպով պնդել, որ սկսած հայկական գաղթավայրերի գոյացման շրջանից լեհահայերը ակտիվորեն մասնակցել են այն բոլոր պատերազմներին, որ մղել է Լեհաստանը իր արտաքին թշնամիների դեմ։

Պատերազմներին նրանց ունեցած մասնակցությունը արտահայտվում էր երկու ձևով. նախ՝ նրանք ֆինանսական խոշոր օժանդակություն էին ցույց տալիս երկրի և առանձնապես Լեհաստանի հարավային քաղաքների պաշտպանության ամրապնդմանը, և, երկրորդ, անձամբ մասնակցում էին մարտական գործողություններին։ Բերենք մի քանի փաստեր այդ մասին։ 1656 թ. հայազգի Միխոն Կամենեց-Պոդոլսկ քաղաքին նվիրել է իր հաշվին պատրաստած թնդանոթներ[12]. Լվովցի հայեր Գաբրիել Բեռնատովիչը և Քշիշտոֆ (Քրիստափոր) Չադիկևիչը տարբեր ժամանակ լեհական զինված ուժերի կարիքների համար նվիրաբերել են մի պատկառելի գումար՝ 93 հազար 197 լեհական զլոտի։ Ի դեպ, նրանց հայրենասիրական քայլը երախտագիտության արտահայտություն է գտել Յան Կազիմիր թագավորի 1661 թ. հուլիսի 31-ի հատուկ հրամանում և նույնիսկ այսպես կոչված սեյմային սահմանադրությունում[13]։

Թշնամու կողմից լեհական քաղաքների պաշարման ժամանակ տեղի հայերը ամբողջ բնակչության հետ միասին հավասարապես մասնակցում էին մուծվող ռազմական տուգանքներին, որոնք, ինչպես և պետք է ենթադրել,

---

[9] Wł. Lozinski, Prawem i lewem, Krakow, 1960, էջ 85։

[10] St. Lewicki, Targi lwowskie od XIV—XVIII wieku, Lwow, 1921, էջ 35—36։

[11] S. Baracz, O rękopismach kapituły ormiańskiej lwowskiej, „Dziennik literacki", Lwow, 1853, № 35.

[12] Ուկր. ՍՍՌ Լվովի ՊԿՊԱ, ֆ. 52, ց. 3, կապոց 3, 4։

[13] S. Barącz, Rys, էջ 94։

հաճախ կազմում էին վիթխարի գումար։ Այսպես, 1672 թ. սեպտեմբերի 27-ին թուրքական բանակի հրամանատարությունը սպառնաց գնդակոծման ենթարկել և ոչնչացնել պաշարված Լվովը, եթե քաղաքը չվճարի 100 հազար լեհական զլոտիի տուգանք։ Քաղաքացիները ի վիճակի չլինելով վճարել այդ մեծ գումարը, կապուդան փաշայի (թուրքական ծովակալ) մոտ պատվիրակություն ուղարկեցին, խնդրելով տուգանքը պակասեցնել 20 ազար զլոտիով։ Պատվիրակության կազմում էին նաև լվովցի մեծահարուստ հայեր՝ վերևում հիշատակված Գաբրիել Բեռնատովիչը և Յակուբ Յաշկևիչը։ Սրանք թուրքերի կողմից ազատ արձակվեցին միայն այն ժամանակ, երբ քաղաքի հայերը մուծեցին ռազմատուգանքի իրենց բաժինը, որը կազմում էր (այդ թվում նաև հայ եկեղեցու բաժինը) 35 հազար թալեր[14]։

Թուրքերի դեմ մղվող պատերազմներում լեհահայերը հաճախ կատարում էին հետախուզական առաջադրանքներ։ Հիանալի տիրապետելով թուրքերենին և արտաքուստ զրեթե ոչնչով չտարբերվելով նրանցից, հայ ռազմիկները հագնում էին ենիչերների համազգեստ և թափանցում թուրքական զորքերի զբաղեցրած շրջանը։ Մանրամասն տվյալներ հավաքելով թուրքական բանակի քանակության, տեղադրման, սպառազինման և զինամթերքի ու պարենամթերքի մասին, նրանք վերադառնում էին և արժեքավոր հետախուզական տեղեկություններ հաղորդում լեհական հրամանատարությանը։ Իսկ մարտական գործողություններ սկսվելիս, նրանք լեհերի հետ միասին նետվում էին մարտի։ Լեհական պատմական գրականության մեջ նշվում է, որ թուրքերի դեմ Յան Սոբեսկու ձեռնարկած վիեննական ռազմարշավի ժամանակ լեհական բանակում եղել են 5000 հայեր[15]։

XVII դ. տեղի ունեցած պատերազմների ժամանակ ցուցաբերած բացառիկ խիզախության համար լեհական սեյմի և թագավորների կողմից շլյախտական իրավունքներ են շնորհվել բազմաթիվ հայերի, այդ թվում՝ Կամենեց-Պոդոլսկի բնակիչ Յան Ավագին (Հովհաննես Ավագյան)[16], որի սխրագործությունների մասին լեհ հեղինակներն առհասարակ խոսում են առանձնակի պատկառանքով, ինչպես նաև Յան Թորոսովիչին, Զախարիաշ Ջադիկևիչին, Բեռնարդ Բեռնատովիչին, Բոգդան Շեֆերովիչին և ուրիշների[17]։ Երբ 1658 թ. լեհական սեյմը քննարկում էր Յան Թորոսովիչին շլյախտիչի իրավունքներ շնորհելու հարցը, անձամբ ելույթ է ունենում Յան Կազիմիր թագավորը և նշում լեհական պետության հանդեպ նրա ունեցած խոշոր ծառայությունները։

XVI և մասնավորապես XVII դ. պաշտոնական թղթերում և այլ կարգի վավերագրերում բազմաթիվ հիշատակություններ կան լեհական արտաքին քաղաքականության և դիվանագիտության ասպարեզում հայերի մատուցած ծառայությունների մասին։ Բնութագրելով այս ասպարեզում լեհահայերի խաղացած դերը, ռուս պատմաբան Ի. Լիննիչենկոն գրում էր. «Հայերից լավ ոչ ոք չգիտեր թաթարների, թուրքերի և արևելյան մյուս ժողովուրդների սովորությ-

---

14 Նույն տեղում, էջ 126, 134։

15 Wielka encykłopedya powszechna, Serya II, т. V, VI, Warszawa, 1908, էջ 400։

16 И. Линниченко, Общественная роль армян, էջ 4։

17 S. Barącz, Żywoty sławnych ormian w Polsce, (Նայել ըստ ազգանվան առաջին տառի այբբենական կարգի։

ները, որոնց հետ նրանք ամեն օր շփվում էին առևտրական շրջանառություն-ների առնչությամբ։ Էլ ո՞ւմ, եթե ոչ հայերին պետք է հանձնարարվեր այն ժամանակի հմտագույն դիվանագետների՝ արևելքի մարդկանց հետ դիվա-նագիտական բանակցություններ վարելու վտանգավոր գործը այն դեպքում, երբ էթիկետի փոքրագույն խախտումը, անհաջող արտահայտությունը, գոռող շլյախտիչի տեսակետից դատարկ ձևականության խախտումը կարող էին հենց սկզբից ձախողել դիվանագիտական կամպանիան Արևելքում։ Վերջապես, այն ժամանակվա շլյախտիչներից ո՞վ կարող էր հպարտանալ լեկվաբանական այնպիսի ընդունակություններով, որով օժտված էր յուրաքանչյուր սովորա-կան հայ։ Այդ պատճառով էլ թեև Արևելք ուղարկվող դիվանագիտական մի-սիաները գլխավորում էին առհասարակ շլյախտական ծագում ունեցող լեհեր, ինչ-որ անվանի մագնատ կամ աշքի ընկնող շլյախտական ընտանիքի՝ դիվա-նագիտական իր կարիերան սկսող երիտասարդ անդամ, բայց փաստացի դեսպանն էր լինում թարգմանչի համեստ դերով նրան ուղեկցող հայ վաճառա-կանը»[18]։

*XVI—XVII դդ. դիվանագիտական առաջադրանքներ կատարող հայերի մենք ամենից շատ հանդիպում ենք Թուրքիայում, Պարսկաստանում և Ղրիմում։ Այդ ժամանակաշրջանում սուլթանական Թուրքիան հասել էր իր հզորության գագաթնակետին։ Ամբողջ Առաջավոր Ասիան, Եգիպտոսն ու հարավ-արևելյան Եվրոպայի մի զգալի մասը հեծում էին նրա ծանր լծի տակ։ Օսմանյան կայսրությունը սկսել էր լրջորեն անհանգստացնել նաև հարավային և կենտրոնական Եվրոպայի երկրներին (Ավստրիա, իտալական քաղաքներ և այլն)։ Թուրքերի հետ հարաբերությունները եվրոպական պետությունների դիվանագիտության առավել բարդ և պատասխանատու բնագավառն էր։ Իսկ լեհական արքունիքի համար այդ հարաբերությունները էլ ավելի նշանակալից էին նրանով, որ թուրքական զավթիչների ագրեսիվ քաղաքականությունը XVII դ. երկրորդ կեսին անմիջականորեն ուղղված էր Լեհաստանի և նրա մերձավոր հարևանների դեմ։ Միանգամայն հասկանալի է, որ լեհական դիվանագիտությունն այդ պայմաններում պետք է ձգտեր այն բանին, որ երկիրը խուսափեր զորեղ թշնամու հետ ռազմական բնդհարում ունենալուց։ Միաժամանակ լեհական արքունիքը լայն գործունեություն էր ծավալել հակաթուրքական կոալիցիա ստեղծելու ուղղությամբ։ Այդ պլանների մեջ էին մտնում նաև Պարսկաստանի և նույնիսկ Հայաստանի ներգրավումը թուրքերի դեմ մղվող պայքարում։ Այսպիսով, հայերը ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեհաստանում լեհական կառավարության կողմից դիտվում էին որպես օժանդակ ուժ այդ պայքարում։*

*Բուրժուա-կղերական պատմագրության մեջ լայնորեն տարածված է այն կարծիքը, թե լեհական դիվանագիտության ասպարեզում սովորաբար հանդես էին գալիս հայ վաճառականները։ Սակայն փաստեր կան այն մասին, որ նրանց մեջ եղել են նաև պրոֆեսիոնալ դիվանագետներ։ Սրանց շարքում հիշատակության արժանի է հատկապես Սուլեյման Կոնստանտին կոմս դե Սիրիի անունը, որի համբավը տարածված է եղել Լեհաստանի սահմաններից շատ հեռու։ Նա կատարել է մի շարք պատասխանատու դիվանագիտական հանձնա-*

[18] И. Линниченко, Обществ. роль армян, էջ 6—7։

բարություններ Ավստրիայում, Կոնստանդնուպոլսում, Պարսկաստանում, Ռուսաստանում և այլուր[19]։

Հայտնի է նաև հայազգի մի այլ պրոֆեսիոնալ դիվանագետ՝ Պյոտր Գրիգորովիչը Խոսելով նրա մասին, անցյալ դարի լեհ պատմաբան Վ. Լոզինսկին նրան բնութագրում է որպես «արտասովոր մի անձնավորություն», որը լեհական արքունիքի ֆինանսական գործակալն էր, և դիվանագիտական լայն գործունեություն էր ծավալել մի շարք եվրոպական երկրների, ինչպես նաև Թուրքիայի հետ Լեհաստանի հարաբերությունների (հավանաբար, առևտրա-ֆինանսական հարաբերությունների) կարգավորման ասպարեզում[20]։

Կարելի է մատնանշել նաև հայ խոշոր դիվանագետներ Սեֆեր Մուրատովիչի[21], Պյոտր Իվանովի[22] և ուրիշների գործունեությունը, սակայն մեր հոդվածի սահմանափակ հնարավորությունները թույլ չեն տալիս ավելին ասել նրանց մասին։

Բերված փաստերից երևում է, որ լեհահայերը, չնայած իրենց սակավաթիվ լինելուն, աչքի ընկնող դեր էին խաղում լեհական պետության ներքին և արտաքին կյանքում։

Լեհահայերը առավել նշանակալի ծառայություններ էին մատուցում Ռուս Պոսպոլիտային տնտեսական կյանքի բնագավառում։ Հիմնականում զբաղված լինելով առևտրով և այն էլ միջազգային առևտրով, սկսած XIV դ. նրանք իրենց ուսերի վրա էին վերցրել Լեհաստանը Մերձավոր Արևելքի վաճառական կենտրոնների հետ կապելու դժվար գործի ծանրությունը։

Արևելքից նրանք Լեհաստան էին բերում խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ձիեր, կաշվեղեն, մեղրամոմ, կերպասներ, արևելյան գորգեր, մետաքս, ներկեր, շոր մրգեր, համեմունքներ, կիտրոն և մերձարևադարձային այլ կուլտուրաներ, դինի, ինչպես նաև զենքեր և ռազմական հանդերձանք։ Այդ և նման մի շարք այլ ապրանքներ, որոնք հանդիսանում էին հայկական առևտրի տրադիցիոն առարկաները, Լեհաստանում ստացել էին «հայկական ապրանքներ» անունը։ Տեղեկություններ կան նաև այն մասին, որ լեհահայ վաճառականները զբաղվում էին Թուրք-Թաթարական ստրկությունից քրիստոնյա գերիներ փրկագնելու գործով։ Օրինակ, XVII դ. դրանով զբաղվում էին լվովցի հայ վաճառականներ Նիկոլայ Դերշիմոնովիչը, Նիկոլայ Սերեբկովիչը, Գաբրիել Կոստերովիչը և ուրիշներ[23]։

Զբաղվելով առևտրով, լեհահայերը, բնականաբար չէին կարող անտարբեր վերաբերմունք ունենալ այն բոլորի նկատմամբ, ինչ վերաբերում էր առևտրի պայմաններին։ Ահա թե ինչու Լեհաստանի հայկական գաղութի պատմության ամբողջ ժամանակաշրջանում նրանք կրքոտ կերպով հետևում էին լեհական առևտրի զարգացման վիճակին, համառ պայքար էին մղում իրենց առևտրական իրավունքների և արտոնությունների ընդլայնման ու պահպանման համար։

---

[19] S. Barącz, Żywoty (տե՛ս Sulejman Konstanty graf de Siry).

[20] Wł. Lozinski, Patrycyat i mieszczanstwo lwowskie w XVI i XVII wieku էջ 207—208։

[21] Ուկր. ՍՍՌ Լվովի ՊԿՊԱ, ֆ. 52, ց. 3, (1607—1610), էջ 679։

[22] Центральный государственный архив древних актов (ЦГАДА), ф. 79, столбцы 1645, август 16 и 21 (св. № 60).

[23] Տե՛ս S. Barącz, Żywoty; wł. Lozinski, Patrycyat i mieszczanstwo lwowskie, էջ 200։

Լեհահայերի առևտրական իրավունքների վերաբերյալ գրավոր աղբյուրներն են հայկական և լեհական զատարանների արձանագրական մատյանները, ինչպես նաև պետական վավերաթղթերը (արտոնագրեր, դեկրետներ, հրովարտակներ և այլն)։ Այդ աղբյուրները թեև հաճախ չափազանց կարճառոտ են ու կցկտուր, բայց կարող են բավարար հիմք ծառայել առևտրի բնագավառում հայերի իրավական վիճակի մասին որոշ գաղափար կազմելու համար։ Առաջին տպավորությունը, որ մենք ստանում ենք դրանցից, այն է, որ հայերի առևտրական իրավունքների հարցը Լեհաստանում ամեն անգամ բարձրացվել է կամ քաղաքային իշխանությունների և իրենց իսկ՝ հայերի բողոքների կապակցությամբ, կամ էլ հայ գաղթականների նոր խմբերի Լեհաստան գալու առիթով։ Ընդհանուր կանոնադրություն այդ մասին գոյություն չի ունեցել։ Այդպիսի կանոնադրություն չի եղել նաև լեհերի համար։

Արևմտաուկրաինական հողերում լեհական տիրապետության սկզբնական շրջանում հայերի առևտրի համար գոյություն ուներ միայն մեկ սահմանափակում. նրանք կարող էին առևտուր անել միայն արևմտաուկրաինական քաղաքներում։ Այդ սահմանափակումը վերացվեց 1402 թ. Վլադիսլավ Յագելլո թագավորի հրամանագրով։ Սկսած այդ պահից նրանք կարող էին առևտուր անել ինչպես նշված վայրում, այնպես էլ լեհական թագի և Լիտվայի բոլոր տերիտորիաներում[24]։ Չէին սահմանափակված նմանապես առքի և վաճառքի չափերը. նրանց թույլատրվում էր զբաղվել և՛ մեծածախ, և՛ մանրածախ առևտրով, իսկ կտորեղենը՝ նաև կանգուններով։ Այս իրավունքը պաշտոնապես օրինականացվեց 1462 թ.-ին։ 1498 թ. հունվարի 2-ի հրամանագրով Յան Օլբրախտ թագավորը նրանց իրավունք տվեց ազատ կերպով մասնակցել բոլոր տոնավաճառներին և ամենօրյա առևտրին (тарги)։ 1505 թ. մայիսի 6-ին Ալեքսանդր թագավորը խստիվ արգելեց մաքսատներին՝ մաքս վերցնել հայերի այն ապրանքների համար, որոնք բերվում էին Վալախիայից, Հունգարիայից, Լատվայից, Սիլեզիայից, Մոսկվայից, Ղրիմից, Թուրքիայից և այլ վայրերից, եթե միայն այդ ապրանքների արժեքը չէր գերազանցում լեհական դրամի 18 կոպից (մեկ կոպը հավասար է 60 միավորի)[26]։

1520 և 1524 թթ. արտոնագրերով Սիգիզմունդ I թագավորը արգելեց մի շարք խոշոր քաղաքների (Կրակով, Սանդոմիր, Ռոպչիցա, Լվով, Լյուբլին և այլն) մաքսատներին որևէ մաքս գանձել հայ առևտրականների ապրանքների համար[27]։ Նրա այս միջոցառման նպատակը, դատելով նշված քաղաքների տեղադրումից, կայանում էր նրանում, որպեսզի հայկական առևտուրը ազատ կերպով ծավալվեր նաև Մեծ Լեհաստանում։

Հայերի այս արտոնությունները կատաղի դիմադրություն էին առաջացնում լեհական քաղաքային վերնախավի շրջանում։ Ամեն կերպ շրջանցելով կամ անտեսելով թագավորական հրովարտակները, լեհական քաղաքային իշխանությունները զանազան խոչընդոտներ էին ստեղծում նրանց առևտուրը խափանելու համար։ Օրինակ, նրանք շատ հաճախ քաղաքի դարպասների մոտ կանգնեցնում էին ապրանքներով բարձված հայկական քարավանները, թույլ

---

[24] Ł. Charewiczowa, Ograniczenia gospodarcze, էջ 205—206։

[25] Նույն տեղում, էջ 206։

[26] T. Gromnicki, Ormianie w Polsce, ich historja, prawa i przywileje, էջ 101։

[27] Նույն տեղում, էջ 101—102։

չտալով նրանց քաղաքից դուրս գալ կամ քաղաք մտնել։ Դա արվում էր հատկապես տոնավաճառների ժամանակ։ Քաղաքից դուրս գալու հնարավորություն չունենալով, նրանք կորցնում էին իրենց համար խիստ թանկարժեք տոնավաճառային ժամկետը, որի պատճառով խոշոր նյութական կորուստներ էին կրում։ Բացի դրանից, քաղաքային իշխանությունները սիստեմատիկ կերպով ընդլայնվում էին հրեաների առևտրական հնարավորությունները, փորձելով նրանց հակադրել հայերին։ Զբաղվարվելով դրանով, քաղաքային իշխանությունները բողոք-բողոքի ետևից ուղարկում էին թագավորներին՝ պահանջելով վերացնել հայերի առևտրական իրավունքները։ Այդպիսի մի փորձ նրանք կատարեցին Ստեֆան Բատորիի թագավոր ընտրվելուց անմիջապես հետո։ Սակայն հակառակ նրանց սպասելիքների, թագավորը 1578 թ. հուլիսի 7-ի իր հրովարտակով վերացրեց իրավական այն բոլոր տարբերությունները, որ առևտրի ասպարեզում գոյություն ունեին կաթոլիկների և հայերի միջև, այսինքն՝ հայ վաճառականներին իրավունք տվեց կաթոլիկների հետ համահավասար առևտուր անել։[28] Լեհ կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոս Սոլիկովսկին, այդ արտոնագիրը համարելով լուրջ խոշընդոտ հերձվածության[29] դեմ կաթոլիկ եկեղեցու մղած պայքարում[30], Այդ եկեղեցու մի այլ ազդեցիկ ներկայացուցիչ՝ Սեբաստիան Պետրիչին, իշխանություններից պահանջում էր անհապաղ վերացնել այդ արտոնագիրը, որպեսզի իր կարծիքով, հայերը չկարողանան «մեծ չարիք» դառնալ Լեհաստանում[31]։ Մեղադրանքներից զերծ չմնաց նաև ինքը՝ Ստեֆան Բատորին։ Նրա մասին այս ու այն կողմում լսվում էին ամեն տեսակ շշուկներ։ Օրինակ, փորձում էին հավատացնել, որ իբրև թե այդ հրովարտակը հրապարակելիս «օտարազգի թագավորը»[32] դեռ բոլորովին պետական գործերի վիճակին ծանոթ չէր, և նրա մտքերը ավելի շատ զբաղված էին Ռուսաստանի դեմ մղվելիք պատերազմի ծրագրերով[33]։

Լեհ առևտրական վերնախավը այդ պայքարում որոշ հաջողության հասավ Բատորիի մահից հետո։ Նորընտիր թագավոր Սիգիզմունդ 3-րդը 1600 թ. ապրիլի 17-ի հրովարտակով զգալիորեն սահմանափակեց հայերի առևտրական իրավունքները։ Հետագայում, սակայն, Վլադիսլավ 4-րդի և, հատկապես, Յան Սոբեսկու կառավարման շրջանում նրանց այդ իրավունքները վերստին ընդլայնվեցին։ Բայց դա արդեն Լեհաստանի պատմության այն ծանր ժամանակաշրջանն էր, երբ քաղաքային առևտուրն ու արհեստները կատաստրոֆիկ անկում էին ապրում, իսկ հայերի վիճակը բացի դրանից էլ ավելի էր վատթարացել երկրում ծայր առած կրոնական հալածանքների հետևանքով։ Հայկական առևտրի անկումը դրանից հետո ընթացավ չափազանց արագ տեմպերով։ Իսկ Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև Լեհաստանի երեք բաժանումները վերջնականապես վերացրին հայերի ինչպես բոլոր հատուկ արտոնությունները, այնպես էլ առևտրական իրավունքները։

---

28 Պ ի շ ո ֆ, Լեհահայոց հին իրավունքը, էջ 35—36։

29 «Հերձվածներ» միջնադարյան Լեհաստանի կաթոլիկ եկեղեցին համարում էր քրիստոնյա այն բոլոր ժողովուրդներին, որոնք չէին ընդունում Հռոմի եկեղեցու գերիշխանությունը, այսինքն՝ կաթոլիկներ չէին։

30 Dodatek tygodniowy przy Gazecie lwowskiej, 1857, № 44.

31 Նույն տեղում։

32 Ս տ ե ֆ ա ն Բ ա տ ո ր ի թագավորը Լեհաստան էր հրավիրվել Սեմիգրադիից (Հունգարիա)։

33 J. Charewiczowa, Ograniczenia gospodarcze, էջ 212։

Լեհաստանում հայերի երկրորդ հիմնական զբաղմունքը արհեստագործությունն էր։ Սակայն լեհական ընդհանուր արհեստագործական արտադրության մեջ հայ արհեստավորները նույնպիսի տեսակարար կշիռ չունեին, ինչպես առևտրի բնագավառում։ Գոյություն ունեցող մի շարք արտակարգ դժվար պայմանների հետևանքով հայերին չէր հաջողվում լայնորեն մուտք գործել արհեստագործական արտադրություն։ Ինչպես շատ այլ երկրներում, այնպես էլ միջնադարյան Լեհաստանում համքարությունները կազմակերպվում էին կրոնական սկզբունքով, նրանցից յուրաքանչյուրն ուներ իր հոգևոր հովանավորը և հանդիսանում էր միասնական կրոնական եղբայրություն։ Հենց միայն այս հանգամանքը լուրջ պատճառ էր այն բանի, որ հայերին, որոնք համարվում էին հերետիկոսներ, հերձվածողներ ((schyzmatyk). չընդունեին կաթոլիկական համաքարությունները։ Լվովի ոսկերիչների համքարության կանոնադրության մեջ (1600 թ.) պարզ կերպով ասված էր հետևյալը. «Մեր ոսկերչական արհեստի համար պահանջվում են բարի կամքի մարդիկ, որոնք լավագույն կերպով նվիրված են կաթոլիկ հավատին։ Լվովի ոսկերիչ վարպետները չեն կարող ընդունել և իրենց շարքերում հանդուրժել ոչ մի հերետիկոս կամ սխիզմատիկ վարպետի։ [Այդպիսի իրավունք ունեն] միայն կաթոլիկները՝ բացառությամբ այն ռուսիների և հայերի, որոնք կմիավորվեն համընդհանուր հռոմեական եկեղեցու հետ»[34]։

Հայ արհեստավորների գերակշիռ մասը ստիպված էր կամ լրացնել այսպես կոչված պարտաշների շարքերը և կամ չափազանց մեծ դժվարությունների հաղթահարման գնով ձեռք բերել սղգային համքարությունների ստեղծման իրավունք։ Այդ նույն պատճառով էլ նրանք չէին կարողանում իրենց հմտությունները կիրառել արհեստների բազմաթիվ ճյուղերում և սահմանափակվում էին հիմնականում կաշեգործությամբ և ոսկերչությամբ։ Բայց այս ճյուղերում նրանք հասնում էին իսկական կատարելության. նրանց արհեստների արտադրանքը գնահատվում էր չափազանց բարձր։ Տեղեկություններ կայն այն մասին, որ դեռևս XV դարի սկզբում (1409—1419 թթ.) նրանք արդեն ճանաչված վարպետներ էին։ Օրինակ, այդ ժամանակաշրջանում Լվովում եղած 18 ոսկերիչ-վարպետներից մեկը լեհ էր, վեցը՝ հայ, իսկ մնացածը՝ գերմանացիներ։ XVII դ. վերջերին հայ ոսկերիչ վարպետների թիվը հասել էր արդեն 30-ի։ Լեհ հեղինակ Վ. Լոզինսկու վկայությամբ «այդ թիվը (այսինքն 30-ը.— Մ. Հ.) կազմում է ընդհանուր թվի կեսից ավելին։ Իսկ արհեստի նշանակությամբ և իրենց հարստությամբ նրանք (հայ ոսկերիչները.—Մ. Հ.) էլ ավելի բարձր էին կանգնած գերազանցության սովորական աստիճանից»[35]։

Լվովի մագիստրատի 1627 թ. արձանագրություններում պահպանվել են տվյալներ, որոնցից կարելի է որոշ պատկերացում կազմել հայ արհեստավորների արտադրանքի արժեքի, ինչպես նաև նրանց պատվիրատուների մասին։ Օրինակ, դրանցից մենք իմանում ենք, որ հայ ոսկերիչ-վարպետ Սեֆերը մի անգամ քաղաքացի Տաչիկ Վավժինցին վաճառել է սեփական արտադրության երեք թուր և մեկ թամբ և դրանց դիմաց նրանից ստացել 7000 լեհական զլոտի[36]։ Լվովցի մի այլ հայ ոսկերիչ վարպետ՝ Դուխնիչը (XVII դ. վերջը)

---

[34] W ł. Lozinski. Złotnictwo lwowskie. Lwow, 1912. էջ 36։

[35] Նույն տեղում, էջ 121—122։

[36] Նույն տեղում, էջ 101—102։

պատրաստում էր զեղեցիկ և նուրբ զարդարանքներ բարձրաստիճան շլյախտիչների համար։ Նրա մշտական պատվիրատուների թվում էին իշխան Դիմիտր Վիշնևեցկին, Պերեմիշլի ստորոստա Ենջեյ Մոդրժևսկին, զեներալ Հելիաշ Լոնցկին, Սերաձի վոեվոդի կինը՝ Պշերեմբեկան և ուրիշներ[37]։ Հայ ոսկերիչների արտադրանքը լայն ընդունելություն էր գտնում նաև Լեհաստանի թագավորների մոտ։ Յան Սոբեսկու տանը կար մի արհեստանոց, ուր կատարվում էին թագավորի անձնական պատվերները։ Այնտեղ էր աշխատում նաև հայտնի ոսկերիչ վարպետ Պետրոս Զախարիաշևիչը, որը թանկարժեք քարերով, ոսկով ու արծաթով զարդարում էր Յան Սոբեսկու անձնական զենքը և հագուստները։ Թագավորի, արքունի մեծամեծերի և ականավոր իշխանների պատվերներ էին կատարում նաև հայ արհեստավորներ Հարություն Դաղուրովիչը, Ներսես Մոյղեսովիչը և ուրիշներ։

Ոսկերչությամբ և կաշվի մշակմամբ հայերը Լեհաստանում զբաղվել սկսեցին շատ վաղ ժամանակներում։ Կաշվից նրանք պատրաստում էին դոտիներ, զանազան դույնի կոշիկներ, սաֆյան (այծի կամ ոչխարի մշակված կաշի), ռազմական հանդերձանք, ձիասարք և այլ առարկաներ։ Լեհաստանում հատուկ հռչակ էին վայելում հայ վարպետների պատրաստած սաֆյանները։ Դրանց պատրաստումը հայ արհեստավորների ամենատարածված նեղ մասնագիտությունն էր։ Պատահական չէ, որ հենց սաֆյան արտադրող հայ արհեստավորներին էլ հաջողվեց կազմակերպել առաջին հայկական համքարություններ։ Դա տեղի ունեցավ 1620 թ. Լվովում[38], որից հետո նման համքարություններ սկսեցին կազմակերպվել Լեհաստանի գրեթե բոլոր հայկական բնակավայրերում։ Լվովի համքարությունն ուներ իր կանոնադրությունը, որը բաղկացած էր 11 կետից։ Նրա բովանդակությունը ցույց է տալիս, որ հայկական համքարությունները կազմակերպչական տեսակետից գրեթե ոչնչով չէին տարբերվում լեհական համքարություններից։ Այն բաղկացած էր վարպետների մի խմբից, որոնք աշխատում էին իրենց տանն առանձին կամ արհեստանոցներում։ Վարպետների ընդհանուր ժողովում ընտրվում էր մի ավագ (ստարոստա), որը հետևում էր համքարության կանոնադրության կատարմանը։

Յուրաքանչյուր վարպետ ուներ իր օգնականները՝ ենթավարպետները և աշակերտները։ Խոշոր հայ արհեստավորները մեծաքանակ պատվերների կատարման դեպքում դիմում էին վարձու ենթավարպետների և աշակերտների օգնությանը։ Հայ վարպետների այդ պրակտիկան բացասական ռեակցիա էր առաջացնում լեհ արհեստավորների շրջանում։ Այդ մասին է վկայում Լվովի ոսկերիչների համքարության մի որոշում (XVII դ. երկրորդ կես), ուր մասնավորապես մենք կարդում ենք. «Տեսնելով, որ համքարությունը (լեհական—Մ. Հ.) մեծ կորուստներ է կրում այն բանից, որ հայ ոսկերիչները խոշոր պատվերներ են վերցնում մեծ պարոններից և շլյախտական ծագում ունեցող այլ մարդկանցից և դրանից ստանում մեծ օգուտներ, այն դեպքում, երբ նման պատվերներ ընդունելը թույլատրված է ոչ թե նրանց, այլ կարողների համքարության մեր եղբայրներին. հաշվի առնելով, որ նրանք (հայ ոսկերիչները.—Մ. Հ.) նախապես գործարքի մեջ են մտնում նրանց հետ (շլյախտիչների և մագնատների.—Մ. Հ.) և դրանից հետո միայն մեր եղբայրների հետ

---

37 Նույն տեղում, էջ 153։

38 J. Charewiczowa, Lwowskie organizacje zawodowe za czasow Polski przedrozbiorowej, Lwow, 1929, էջ 23։

կոնտրակտներ կնքում այդ մասին, որը շատ է ճնշում մեր համքարությանը, իսկ շահում են հիշյալ ոսկերիչները. այդ բանից խուսափելու համար... մեր միջև մի այսպիսի laudum որոշեցինք. որպեսզի համքարության եղբայրներից ոչ ոք չհամարձակվի հայազգի ոսկերիչներից վերցնել խոշոր աշխատանքներ, ինչպես, օրինակ, ձգված կամ վենետիկյան ոսկով կարված օթոցներ, կամ կալիաններ պատրաստելու աշխատանքներ, բացառությամբ այնպիսիների, որոնք հումքի և ոսկեթելով կարելու հետ միասին արժեն 50 զլոտի»[39]։

Հայերի մասնակցությունը լեհական արհեստագործական արտադրությանը չէր սահմանափակվում միայն հայկական համքարություններով։ Բացի դրանցից գոյություն ուներ հայ արհեստավորների ևս երեք կատեգորիա, որոնք չէին մտնում հայկական համքարությունների մեջ։ Դրանցից առաջինը՝ այսպես կոչված պարտաչներն էին, որոնց մասին հիշատակվեց վերևում։ Բնակվելով քաղաքների մեջ ընկած այն տերիտորիաներում, որոնք գտնվում էին ֆեոդալների տիրապետության տակ[40], նրանք չէին օգտվում քաղաքացու իրավունքներից։ Հետևաբար, նրանք չէին կարող աշխատել քաղաքային համքարություններում։ Նրանք զբաղվում էին միայն ֆեոդալների հովանավորությամբ։ Իսկ վերջիններս դրանց հաճախ օգտագործում էին քաղաքային իշխանությունների և քաղաքային արհեստավորության դեմ իրենց մղած պայքարում։ Հայ պարտաչների արտադրանքը հիմնականում բավարարում էր մերձակա գյուղերի և շրջանների գյուղացիության պահանջները։ Բացի այդ նրանք պատրաստում էին առևտրական քարավանների համար սայլեր, զբաղվում ջուլհակությամբ, կաշեգործությամբ և կոշկակարությամբ։

Հայ արհեստավորների երկրորդ կատեգորիային պատկանում էին նրանք, ովքեր աշխատում էին լեհական համքարություններում։ Դրանց թիվը չափազանց սահմանափակ էր. 1654 թ. թագավորական հրամանագրի համաձայն, միայն 4 հայեր կարող էին աշխատել լեհական համքարություններում, որոնք էլ, սակայն, իրավունք չունեին ղեկավար գեր կատարել այնտեղ[41]։ 1678 թ., հակառակ այդ հրամանագրի, հայազգի Գրիգոր Լատինովիչը ընտրվում է Լվովի ոսկերչական համքարության ղեկավարներից մեկը։ Դրանից 7 տարի անց, 1685 թ. նույն համքարության ղեկավար է ընտրվում Ներսես Մոյզեսովիչը։ Հայ արհեստավորների գործունեությանը ուշադիր հետևող քաղաքային վարչության տեսադաշտից դրանք, իհարկե, չէին կարող վրիպել։ Շուտով համքարության դեմ նրա կողմից հարուցվում է դատական գործ։ Դատարան ներկայանալով, համքարության ներկայացուցիչները բացատրում են, որ Մոյզեսովիչին նրանք ընտրել են «զորեղ պարոնների» համաձայնությամբ։ Ի վերջո դատարանը որոշում է չեղյալ հայտարարել Մոյզեսովիչի ընտրությունը՝ սխիզմատիկ լինելու պատճառով, իսկ համքարությունը տուգանել 60 զրիվնայով[42]։

Երրորդ կատեգորիայի մեջ մտնում էին այն հայ արհեստավորները, որոնք, չլինելով որևէ համքարության կազմում, աշխատում էին առանձին կամ հատուկ արհեստանոցներում և սպասարկում լեհական արքունիքին, խոշոր մագնատներին ու շլյախտային։ Նրանք օգտվում էին թագավորի անսահ-

---

[39] Wł. Lozinski, Złotnictwo lwowskie, էջ 119։

[40] Ֆեոդալական այդ տիրույթները միջնադարյան Լեհաստանում կոչվում էին յուրիդիկներ։

[41] Wł. Lozinski, Złotnictwo lwowskie, էջ 138։

[42] Նույն տեղում, էջ 139։

մանափակ հովանավորությունից և կոչվում էին սերվիտորիալներ (servitorialis)։ Դրանցից ոմանք նույնիսկ կրում էին թագավորական քարտուղարի բարձրագոչ կոչում։ Դա, իհարկե, լոկ ձևական կոչում էր և շնորհված էր նրանց հեղինակությունը բարձրացնելու համար։

XVII դ. այդ արհեստավորներից հայտնի էին Հարություն Դաղուրովիչը, Պետրոս Մարդերիսովիչը, Թորոս Սեֆերովիչը և ուրիշներ[43]։

Համքարությունները ընդհանրապես խուսափում էին ընդհարվել այս կատեգորիայի արհեստավորների հետ, երկյուղ կրելով թագավորից և մագնատներից։ Սակայն դրանց դեմ նրանք պայքարում էին դարտուղի միջոցներով, օրինակ, զանազան խոչընդոտներ էին հարուցում սերվիտորիալների կողմից հումք գնելու ժամանակ կամ ենթավարպետներին ու աշակերտներին համոզում էին աշխատանքի չընդունվել նրանց մոտ և այլն։

* * *

Վերը շարադրվածից երևում է, որ XVI—XVII դդ. ընթացքում լեհահայերին արտոնվել էին որոշակի քաղաքական և տնտեսական իրավունքներ։ Ճիշտ է, երբ մենք համեմատում ենք այդ իրավունքները տեղի կաթոլիկ բնակչության իրավական վիճակի հետ, ի հայտ են գալիս զգալի տարբերություններ ի վնաս հայերի։ Սակայն, այդուհանդերձ, չի կարելի անտեսել այն գլխավոր փաստը, որ նրանք այնտեղ գտել էին ոչ միայն անձի և գույքի պաշտպանություն, այլև առևտրով ու արհեստներով զբաղվելու որոշակի իրավունքներ և երկրի քաղաքական-հասարակական կյանքին ինչ-որ չափով մասնակցելու հնարավորություններ։ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ նրանց քաղաքային համայնքները օգտվում էին վարչա-դատական ինքնավարության իրավունքից[44], ապա ավելի լրիվ կդառնա նրանց իրավական վիճակի պատկերը, որը նույնիսկ մոտավոր համեմատության մեջ չի կարելի դնել սուլթանական Թուրքիայի դաժան լծի տակ տառապող հայ բնակչության դրության հետ։ Դրանով էլ բացատրվում էր հայ գաղթականության մեծ հոսքը դեպի Լեհաստան ոչ միայն XVI—XVII դարերում, այլև նախորդ ժամանակաշրջանում։

**М. Л. Оганесян**

## ПРАВОВОЕ ПОЛОЖЕНИЕ АРМЯН В ПОЛЬШЕ В XVI—XVII вв.

### Резюме

Правовое положение городского населения многонациональной Речи Посполитой было обусловлено не только сословной принадлежностью, но и религией. В XVI—XVII вв. городскими правами широко пользовались только католики (немцы и поляки). Для армян, украинцев и

---

[43] S. Barącz, Żywoty.

[44] Լեհահայերի ինքնավարության մասին տե՛ս մեր հետևյալ հոդվածները. Ռեչ Պոսպոլիտայի հայկական ինքնավար օրգանները, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտ.), № 8, 1964 թ., Լեհահայերի ինքնավարությունը XVI—XVII դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1964 թ.։

других некатолических национальностей существовал ряд ограничений. Эти ограничения в первую очередь касались строительства и приобретения некатоликами домов в городе, их участия в торговле и ремесленном производстве. Несмотря на это, участие армян в ремесленном производстве и, в частности, в торговле было весьма значительным, о чем свидетельствуют сохранившиеся источники. В рассматриваемый период польская восточная торговля почти полностью была монополией армянских купцов.

В Польше в XVI—XVII вв. по разному относились к правам армянского населения. Городская торгово-ремесленная верхушка, опасаясь увеличения экономического могущества и конкурентноспособности армян, всячески старалась добиться ограничения их прав. Что касается государства и польских феодалов, то они, будучи заинтересованными в увеличении своих доходов от армянской торговли и ремесла, а также учитывая важную роль армян в экономике страны, всемерно покровительствовали армянам и предоставляли им разные права в области торговли и ремесла.